Հաճախ տրվող հարցեր (ՀՏՀ)

Կարմրուկի բռնկում – Սանիտարական բժշկի հրահանգ

1. Ի՞նչ է կարմրուկը

Կարմրուկը խիստ վարակիչ հիվանդություն է, որն հարուցվում է քթի եւ կոկորդի մեջ ապրող վիրուսով: Կարմրուկի ախտանշաններն են՝

- Բարձր ջերմություն (38.2°C կամ ավելի բարձր)
- Հազ
- Հարբուխ
- Կարմրած արցունքակալ աչքեր
- Կարմիր բծերի ախտահարում: Որոշները փոքր-ինչ բարձրացված: Սովորաբար սկսվում է դեմքին կամ մազերի բացման գծում և տարածվում մարմնով մեկ:

Կարմրուկը կարող է հանգեցնել լուրջ հիվանդությունների, հոսպիտալացման կամ անգամ մահվան: Հնարավոր լուրջ հիվանդություններն են՝

- Փորլուծություն
- Ականջի վարակ
- Ուղեղի վնասում
- Խլություն
- Թոքաբորբ

Հղի կանայք, նորածինները, փոքր երեխաներ և թուլացած իմունային համակարգ ունեցող մարդիկ լուրջ հիվանդությունների ձեռքբերման մեծ վտանգի տակ են: Կարմրուկը բուժվող հիվանդություն չէ:

2. Ինչպե՞ս է տարածվում կարմրուկը

Կարմրուկը հեշտությամբ տարածվում է օդային ճանապարհով, երբ վարակված մարդը հազում կամ փռշտում է: 10 հոգուց 9-ը, ովքեր չեն պատվաստվել կարմրուկի դեմ, հավանաբար կվարակվեն: Կարմրուկով հնարավոր է վարակվել, եթե շնչեք նույն օդը կարմրուկով հիվանդ մարդու հետ, նույնիսկ նրա տարածքը լքելուց հետո մինչև երկու ժամվա ընթացքում: Կարմրուկը կարող է տարածվել նախքան վարակված մարդու մոտ ախտանիշների բացահայտումը:

3. Ո՞վ է սանիտարական բժիշկը

Սանիտարական բժիշկը Վարչաշրջանի Վերահսկողների խորհրդի կողմից նշանակված բժիշկն է, որը օրենքի ուժով միջոցներ է ձեռնարկում՝ համայնքի բնակչությանը պաշտպանելու և հիվանդություններն ու վնասվածքները կանխելու համար: Իրավապահ մարմինները կարող են համագործակցել սանիտարական բժշկի հետ՝ հրահանգների կատարումն ապահովելու համար:

4. Ինչո՞ւ եմ ես ստացել սանիտարական բժշկի հրահանգը

Դուք ստանում եք սանիտարական բժշկի հրահանգը, քանի որ շփվել եք կամ շփվում եք կարմրուկով ախտորոշված անձի հետ և Առողջապահության նախարարությանը չեք տրամադրել կարմրուկի դեմ իմունիտետ ունենալու պահանջվող ապացույցներ (այսինքն՝ փաստաթղթեր, որ ստացել եք անհրաժեշտ կարմրուկի դեմ պատվաստանյութ կամ արյան հետազոտության արդյունքը, որը ցույց է տալիս, որ դուք իմունիտետ ունեք): Այսպիսով, դուք կարմրուկով վարակվելու և այն տարածելու ռիսկի տակ եք: Սանիտարական բժշկի կարգադրության մեջ նկարագրված պահանջները եւ սահմանափակումները սահմանվում են կարմրուկի տարածումը կանխելու համար:

Կարևոր կետերը

- Կարմրուկը հեշտությամբ տարածվում է օդային ճանապարհով, երբ վարակված մարդը հազում կամ փռշտում է:
- Կարմրուկը առողջական ռիսկ է առաջացնում աշակերտների և անձնակազմի համար, որոնք կարմրուկով չեն հիվանդացել կամ չեն պատվաստվել պատշաճ կերպով:
- Սանիտարական բժշկի ցուցումներին հետևելը կարող է կանխել կարմրուկի տարածումը:

Ավելի մանրամասն՝

Լոս Անջելես վարչաշրջան, Առողջապահության վարչություն
http://publichealth.lacounty.gov/media/measles/index.htm

Կալիֆորնիայի Առողջապահության վարչություն
https://www.cdph.ca.gov/Programs/CID/DCDC/Pages/Immunization/measles.aspx

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն
http://www.cdc.gov/vaccines/

Armenian CDCP-IP-0024-04 (4/25/19)

5. Ի՞նչ է պահանջվում անել սանիտարական բժշկի կարգադրությամբ

Սանիտարական բժշկի կարգադրությունն օրինական հրաման է, որը պահանջում է, որ դուք խստորեն պահպանեք մի շարք նախազգուշական միջոցներ՝ ինքներդ ձեզ պաշտպանելու կարմրուկը տարածելու հնարավորությունը նվազեցնելու նպատակով: Կարգադրության մեջ նշված է սանիտարական բուժքույրի հեռախոսահամարը, որով կարող եք կապվել այս կարգադրության հետ կապված հարցերով: Մինչև կարգադրության կատարումը.

- Մնացեք տանը / ձեր բնակության վայրում և սահմանափակեք ձեր տեղաշարժը: Դուք <u>չեք կարող</u> դպրոց կամ աշխատանքի հաճախել ձեր տնից / բնակության վայրից դուրս: Խուսափեք հասարակական վայրերից, որտեղ կարող եք հանդիպել շատ մարդկանց, ներառյալ՝ դասարաններ, լսարաններ, գրադարաններ, պաշտամունքային վայրեր, կինոթատրոններ, մթերային խանութներ, առևտրի կենտրոններ, մարզադահլիճներ, բացօթյա միջոցառումներ և մարզական միջոցառումներ:
- Եթե ունեք որևէ նշանակումներ, որոնք պահանջում են ձեր տնից / բնակության վայրից դուրս գալն, ինչպես օրինակ, բժիշկների, ատամնաբուժարան այցերը և դպրոցի հաճախումը, տեղեկացրեք սանիտարական բուժքրոջը: Եթե անհրաժեշտ է այցելել բժշկի, զանգահարեք նրան, նախքան գրասենյակ գնալը և տեղեկացրեք, որ դուք կարմրուկի վարակակիր եք, որպեսզի նրանք կարողանան վարակազերծ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկեն՝ նվազեցնելով կարմրուկի տարածման հնարավորությունը:
- Մի օգտվեք հասարակական կամ առևտրային տրանսպորտի միջոցներից, օրինակ՝ ավտոբուսներից, մետրոյից, գնացքներից, տաքսիներից, ինքնաթիռներից:
- Ոչ ոք չպետք է այցելի ձեզ տանը/բնակության վայրում, եթե նրանք չեն հետազոտվել և չեն հաստատվել առողջապահական աշխատակիցների կողմից՝ որպես կարմրուկի իմունիտետ ունեցող:
- Եթե տեղափոխություն եք պլանավորում այլ սենյակ/բնակության վայր, խնդրում ենք տեղեկացնել սանիտարական բուժքրոջը:
- Միջոցներ ձեռնարկեք մանրէների տարածումը կանխելու համար, որոնք կարող են կարմրուկի հարուցիչ լինել, օրինակ՝ միշտ փակեք բերանը և քիթն անձեռոցիկով՝ փռշտալիս կամ հազալիս:
- Եթե զգում եք կարմրուկի ախտանիշեր, օրինակ՝ բարձր ջերմություն, հազ, հարբուխ, աչքերի կարմրածությունը և/կամ ցանավորում, զանգահարեք սանիտարական բուժքրոջը՝ սանիտարական կարգադրության մեջ նշված հեռախոսահամարով:
- Համագործակցեք մեջ բժշկական անձնակազմի հետ, որը տեղեկատվություն կտրամադրի, կպատասխանի ձեր հարցերին, կօգնի ձեզ կատարել այդ նախազգուշական միջոցները և կհետևի դրանց կատարմանը:

6. Որքա՞ն ժամանակ պետք է հետևեմ սանիտարական բժշկի կարգադրություններին

Սանիտարական կարգադրությունն ուժի մեջ կմնա մինչև. 1) Տրամադրեք փաստաթղթեր, որ ստացել եք համապատասխան դեղաչափով կարմրուկի (ԿԿԽ) պատվաստանյութ, կամ 2) Տրամադրեք արյան հետազոտության արդյունքները, որոնք ցույց կտան, որ Դուք կարմրուկի դեմ իմունիտետ ունեք, կամ 3) Դուք հասել եք ինկուբացիոն ժամանակահատվածի ավարտին: Այս դեպքերում դուք կստանաք ծանուցում, որը Ձեզ ազատում է կարգադրությունից:

7. Ի՞նչ պետք է անեմ, եթե ես լավ չեմ զգում կամ զարգանում են ախտանիշներ, որոնք կարող են կապված լինել կարմրուկի հետ

Եթե լավ չեք զգում կամ ունեք որևէ ախտանիշ, որը կարող է կապված լինել կարմրուկի հետ, ինչպիսիք են բարձր ջերմությունը, հազը, հարբուխը, աչքերի կարմրածությունը և/ կամ ցանավորումն, անմիջապես զանգահարեք սանիտարական բուժքրոջը: Բուժքույրը կօգնի ձեզ որոշել՝ արդյոք դուք պետք է դիմեք բժշկական օգնություն ստանալու համար: Եթե ձեզ բժիշկ է անհրաժեշտ, զանգահարեք բժշկին, նախքան գրասենյակ գնալը և տեղեկացրեք, կարմրուկի վիրուսակիր եք, որպեսզի նրանք կարողանան վարակազերծ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկեն՝ նվազեցնելով կարմրուկի տարածման հնարավորությունը: